

# Ինչպե՞ս Էին սնվում հին դարերում



Թագավորների ու հերցոգների սեղանները միշտ ճոխ կահավորված էին ոսկե և արծաթե պարագաներով: Սակայն այնտեղ պակասող մի պարագա կար՝ ամենահասարակ պատառաքաղը: Հին դարերում ուտում էին ձեռքերով՝ առանց ամաչելու բոլոր 5 մատները մտցնելով ճաշի մեջ:

Մեծ սեղանին դրվող դասակները ևս քիչ էին՝ ընդամենը 2-3 հատ: Անհրաժեշտության դեպքում սեղանակցին էին դիմում դասակը փոխանցելու խնդրանքով:

Ափսեներ ընդհանրապես չկային: Դրանք փոխարինվում էին հացի կլոր շերտերով: Ճաշից հետո ճաշի հյուրեր ներծծած այդ «ափսեները» նետվում էին շների կեր:

14-15-րդ դարերում սեղաններ դեռ չկային: Դրանք «պատրաստվում» էին անմիջապես ճաշից անմիջապես առաջ: Որոշակի բարձրության հենակների վրա դրվում էին տախտակներ, այն ծածկում սպիտակ սփռոցով, որոնց վրա ասեղնագործված էին եղջերուներ, շներ ու եղջրափող հնչեցնող որսորդներ:

Սեղանին էին դնում աղամանը, հացե ափսեներն ու 2 դասակ: Մնում էր սեղանին մոտեցնել 2 նստարանները և հյուրերին հրավիրել սեղանի մոտ:

Հյուրերը ձեռքերով վայելում էին որսի միսը, այնուհետ խմորեղեն, խնձորներ, ընկուզեղեն և խմիչքներ:

1608թ-ին Թոմաս Կորիատ անուկնով անգլիացի մի ճանապարհորդ Իտալիա այցելելուց հետո իր օրագրում նշում է. «Իտալացիները միսն ուտում են պողպատից կամ երկաթից, երբեմն էլ արծաթից պատրաստված շեղբերով: Նրանց հևարավոր չէ ստիպել ուտել ձեռքերով: Իտալացիները կարծում են, որ ձեռքերով ուտելը լավ չէ, քանի որ ոչ բոլորի ձեռքերն են մաքուր:»

Տուն վերադառնալուց առաջ ևս այդպիսի պատառաքաղ ձեռք բերեց, որն այնքան էլ նման չէ ներկայիս օգտագործվող պատառաքաղներին: Այդ պատառաքաղներն ունեին ընդամենը 2 առամ և բռնակ, որի ծայրը զարդարված էր կոնով: Բռնակը երկար չէր, այն գրեթե առամների

Երկարութիւնն ունէր: Այդ պատառաքաղներն Իտալիայում Էին հայտնվել  
Վիզանտիից, իսկ վիզանտիցիներն իրենց հերթին այն ձեռք Էին բերել  
Սերձավոր Արևելքից՝ 11-րդ դարում:



Վերադառնալով Իտալիայից, ընթրիքներից մեկի ժամանակ Թոմասը  
ցանկացավ ցուցադրել իր ձեռքբերումը և դրանով փորձեց ուտել միսը:  
Սեղանակիցները զարմացած նրան Էին նայում: Պատառաքաղն անցավ  
ձեռքից ձեռք: Բոլորն ուսումնասիրեցին այն և եկան այն  
եզրահանգման, որ դրանով միս ուտելն այնքան Էլ հարմարվետ չԷ:  
Այդ օրվանից անցավ մոտ 5 տասնամյակ, մինչև պատառաքաղը սկսեց  
կիրառվել Անգլիայում:

Լեգենդներ են պատվում, որ պատառաքաղը սկսեց կիրառվել, երբ բարձր  
ժանյակե օձիքներն ի հայտ եկան: Այդ օձիքները խանգարում Էին  
գլուխը կախել և մատներով ուտել ուտելիքը:

Պատառաքաղի հետ միաժամանակ շրջանառության մեջ մտան ափսեներն ու  
անձեռոցիկները: